ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/363 «27» 11 2025 թ.

«ԱԱԷ ՇԻՆ» ՍՊԸ
(ՀՎՀՀ 08423469)
ՀՀ Գեղարքունիք, Վաղաշեն 33 փ.14
էլ. հասցե՝ 7arm7stroy7.77@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ ՆԳՆ և «ԱԱԷ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 27.10.2025թ.-ին կնքված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2025/Է-70 ծածկագրով պայմանագրի շրջանակում «ԱԱԷ ՇԻՆ» ՍՊԸ-ն պետք է կատարեր **ՀՀ ՆԳՆ ոստիկանության բժշկական վարչության պոլիկլինիկայի (հասցե՝ ք. Երևան, Աբովյան 54) 208, 209 աշխատասենյակների, 1-ին հարկի մեկ աշխատասենյակի և աստիճանավանդակի պատերի վերանորոգման-հարդարման աշխատանքներ**, որի կատարումից վերջինս հրաժարվել է 19.11.2025թ. ՄԳ/391492-25 գրությամբ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից տույժ չի կիրառվում, քանի որ մասնակիցը իր գրավոր դիմումի համաձայն հրաժարվել է աշխատանքների կատարումից մինչ համաձայնագիր կնքելը: Իսկ տուգանքի չափը հավասար է 5289 /հինգ հազար երկու հարյուր ութսունինը / ՀՀ դրամ:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է Պայմանագիրը: Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատուցված

ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին կամ/և կատարողը խախտել է աշխատանքների կատարման ժամկետը :

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ՆԳՆ-ն միակողմանի լուծում է ՀՀ ՆԳՆ և «ԱԱԷ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2025/Է-70 ծածկագրով պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

«ԱԱԷ ՇԻՆ» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին վճարելու համար, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 223 142,4 / երկու հարյուր քսաներեք հազար մեկ հարյուր քառասուներկու ՀՀ դրամ քառասուն լուման և որպես պայմանագրի ապահովման գումար 148 761,6 /մեկ հարյուր քառասունութ հազար յոթ հարյուր վաթսունմեկ ՀՀ դրամ վաթսուն լուման/ փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N900008000698 և N900008000664 հաշվեհամարներին: Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով,«ԱԱԷ ՇԻՆ» ՍՊԸ -ի տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

« 27 » 11 2025թ.

ք.Երևան

Կատարող՝ Է. Մնացականյան
Հեռ. 010-59-64-86